Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021 . «Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզի վերանորոգման համար» դրամաշնորհային ծրագրի եզրափակիչ արարողություն

2023թ. հունվարի 12-ին Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզում տեղի ունեցավ «Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզի վերանորոգման համար» մինչև 90, 181 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2021) համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արքեպիսկոպոս Ադամյանը, Արմավիրի մարզպետի տեղակալ պարոն առնակ Ավետիսյանը և թիվ 13 մանկապարտեզի տնօրեն տիկին Աննա Սողոմոնյանը, ինչպես նաև այլ շահառուներ և շահագրգիռ կողմեր, այդ թվում՝ քաղաքապետարանի ղեկավարությունը, մանկապարտեզի ուսուցիչներն ու աշխատակիցները, մանկապարտեզ հաճախող երեխաները և նրանց ծնողները:

Ծրագրի նպատակն է եղել բարելավել Էջմիածնի №13 մանկապարտեզը՝ վերանորոգելով երկու մասնաշենքերի խմբասենյակները, սպորտդահլիճը, հանդիսությունների սրահը, սանհանգույցները, խոհանոցի հատվածը և պատշգամբները: Արդյունքում ավելի քան 110 երեխա կօգտվի ծրագրից և մանկապարտեզը հնարավորություն կունենա ընդունելու ևս 30 երեխայի:

Ամբողջությամբ վերանորոգված շենքը

Երեխաների ողջույնի արարողությունը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Խմբային նկար (ձախից երկրորդը՝ Ավետիսյան, Դեսպան Ֆուկուշիմա, տիկին Գասպարյան և արքեպիսկոպոս Ադամյան)